



ԵՎՐՈՊԱԿԱՆ ԱՌՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՄԱՐ
EUROPEAN UNION FOR ARMENIA

Human Rights Defender of RA



ՀՀ մարդու իրավունքների պաշտպան

ՈՒՂԵՑՈՒՅՑ

ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆԻ
ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՀԱՄԱՐ
ԸՆՏԱՆԻՔՈՒՄ ԲՈՒՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԵՐԻ
ՎԵՐԱԲԵՐՅԱԼ



Ընտանիքում բռնություն է համարվում ֆիզիկական, սեռական, հոգե-
բանական կամ տնտեսական բնույթի բռնի արարքը, ինչպես նաև անտե-
սումը, որը կատարվել է ընտանիքի անդամների միջև:

Ընտանիքի անդամներ են՝

ա. անկախ համատեղ բնակության հանգամանքից՝ ամուսինը (այդ
թվում՝ փաստական ամուսնական հարաբերությունների մեջ գտնվող
անձը), նախկին ամուսինը, ծնողը, (այդ թվում՝ խորթ ծնողը, որդեգ-
րող ծնողը, խնամատար ծնողը), երեխան (նաև որդեգրված, խորթ,
հոգեզավակը), որդեգրող ծնողի ամուսինը, ամուսնու ծնողները,
նախկին ամուսնու ծնողները,

բ. համատեղ բնակվող տատը, պապը, քույրը և եղբայրը (նաև համա-
մայր կամ համահայր), ամուսնու քույր, ամուսնու եղբայր, ինչպես
նաև ամուսնու ծնողների, քրոջ և եղբոր համար՝ փեսան և հարսը:

Ընտանեկան բռնությունն ունի ինչպես ուղղակի, այնպես էլ անուղղակի
ազդեցություն ընտանիքի անդամների՝ տվյալ հասարակության մեջ հար-
մարվելու, ինքնադրսևորվելու, ինքնահաստատվելու և պաշտպանված լի-
նելու հնարավորությունների վրա: Այս երևույթը տարածված է ամբողջ աշ-
խարհում, ունի տարբեր դրսևորումներ և տարածվածության մակարդակ:
Ընտանեկան բռնությունն անհամամասնորեն ազդում է հատկապես կա-
նանց ու երեխաների վրա:

Թեժ-գիծ ծառայություն՝

հիմնական առանձնահատկություններն ու նպատակները

Թեժ-գիծ ծառայության առաջնային և հրատապ նպատակներն են
**անվտանգության ապահովումը, տուժողի պատմության ամրագրումը,
նրա իրավունքների վերահաստատումը:** Ըստ այդմ, կարևոր է, որպես-
զի թեժ-գծի հեռախոսազանգին պատասխանող անձինք տեղյակ լինեն
ընտանեկան բռնության և կանանց նկատմամբ բռնության այլ ձևերի ար-
ձագանքման գործընթացի առանձնահատկությունների մասին:

Թեժ-գիծ ծառայության հիմնական նպատակները հետևյալներն են

- Լսել՝ ապրումակցմամբ ու առանց քննադատության:
- Անդրադառնալ բռնության ենթարկված անձի առաջնային կարիքներին
և մտահոգություններին՝ հուզական, ֆիզիկական, սոցիալական, կեն-
ցաղային: Օրինակ՝ նախորդ գիշեր, հնարավոր է, տուժողը գիշերել է
դրսում, սոված է և այլն:

- Վստահություն ներշնչել թեժ-գիծ ծառայության հիմնական նպատակներից է նաև բռնության ենթարկված անձին վստահեցնել, որ ինքը **մեղավոր չէ** կատարված բռնության համար:
- Քննարկել և անհրաժեշտության դեպքում աջակցել անվտանգության պլանի կազմմանը:
- Կազմակերպել աջակցություն զանգահարողին առկա ռեսուրսների սահմաններում կամ ուղղորդել նրան դեպի համապատասխան կառույցներ:

Թեժ- գծի հեռախոսազանգին պատասխանելու ընթացքում նկարի ունենալ հեղեղյալ կարևոր կետերը

- Հեռախոսային խորհրդատվության պարագայում բացակայում է տեսողական կոնտակտը, հետևաբար շատ կարևոր է զանգին պատասխանողի ձայնը և տոնայնությունը, ինչպես նաև հաճախակի՝ «Այո՛, լսում եմ Ձեզ» և այլ նմանօրինակ արտահայտությունների կրկնությունը, որպեսզի զանգահարողը վստահ լինի, որ իրեն լսում են:
- Կարևորե՞ք զանգահարողի հայտնած տեղեկությունները և մի՛ քննադատեք, օրինակ մի՛ պնդեք, որ նա այս կամ այն գործողությունը չի արել կամ թերի է արել:
- Թողե՞ք զանգահարողն ինքն ավարտի իր մտքերը, մի՛ ձևակերպեք դրանք իր փոխարեն, մի՛ ընդհատեք:
- Տվե՞ք բաց հարցեր, որոնք չեն ենթադրում այո կամ ոչ պատասխան:
- Վերածնակերպե՞ք զանգահարողի հիմնական մտքերը հասկանալու համար՝ արդյո՞ք ճիշտ եք ընկալում նրա ասածները:
- Տվե՞ք պարզաբանող հարցեր, եթե չեք հասկանում զանգահարողի ասածները:
- Ամփոփե՞ք հեռախոսազանգի կարևոր մտքերը և բացատրե՞ք հետագա անելիքները:

Հարցեր, որոնք կարևոր կլինեն թեժ-գծի հեռախոսազանգին պատասխանելու ընթացքում

- Ինչպե՞ս կարող եմք Ձեզ օգնել կամ աջակցել:
- Կցանկանա՞ք այլ բան ավելացնել կամ ավելին պատմել կատարվածի մասին:
- Ինչպե՞ս եք Ձեզ զգում:

- Ճիշտ են հասկանում, որ անհանգստություն եք զգում Ձեր երեխաների համար կամ գնալու տեղ չունեք:

Նախընտրելի արգահայտություններ

- Դա Ձեր մեղքը չէ:
- Դուք մեղավոր չեք բռնության համար:
- Օգնություն հնարավոր է տրամադրել կամ մենք կարող ենք օգնել այդ հարցում (ասում ենք միայն այն պարագայում, երբ **վստահ** ենք, որ կարող ենք կազմակերպել աջակցությունը):
- Դուք մենակ չեք, ցավոք, շատ կանայք ամբողջ աշխարհում անցնում են նման փորձության միջով:
- Ամեն ոք արժանի է զգալ անվտանգ իր տանը:
- Նորմալ է, որ ցանկանում եք խոսել կատարվածի մասին:

Հարցեր, որ չպետք է փալ և գործողություններ, որ չպետք է անել

- Դուք դա չպիտի զգայիք:
- Ինչ երջանիկ եք Դուք, որ կենդանի եք մնացել:
- Ինչ մեղք եք Դուք:
- Մի՛ համոզեք բռնության ենթարկված անձին հեռանալ բռնարարից:
- Մի՛ ստիպեք, որպեսզի բռնության ենթարկված անձը վերլուծի կատարված բռնությունը կամ պատասխանի նմանատիպ հարցերի. «Ինչո՞ւ է ինքը բռնության ենթարկվում կամ ինչո՞ւ է հենց ինքը բռնության ենթարկվում»:
- Մի՛ հարցրեք բռնության ենթարկված անձին իր մասին այնպիսի տեղեկություններ, որոնք անմիջականորեն կապված չեն ենթադրյալ բռնության հետ:

Ռիսկի գնահատման առանձնահատկություններ հեռախոսային խորհրատրվության ընթացքում

ԿԱՐԵՎՈՐ Է ԻՄԱՆԱԼ.

Բռնության ենթարկված անձի գնահատականն իրեն սպառնացող վրանգի ռիսկի մակարդակի մասին, որպես կանոն, իրարեսական է: Եթե բռնության ենթարկված անձը վախենում է իր կյանքի համար կամ ասում է, օրինակ, «Նա ինձ կսպանի», ապա դրան պետք է լուրջ վերաբերվել:

Բռնության ենթարկված որոշ անձինք կարիք ունեն, որ իրենց հետ քննարկվի իրենց նկատմամբ կիրառվող բռնության անմիջական ռիսկը: Դուք կարող եք մի քանի ճշգրտող հարցեր տալ՝ հասկանալու համար՝ կա արդյոք անմիջական վտանգ:

Եթե բռնության ենթարկվող անձի մոտ բացահայտվում է բարձր ռիսկի մակարդակ, կարող եք ասել. «Ես մտահոգված եմ Ձեր անվտանգության համար: Եկեք միասին քննարկենք՝ ինչ անել, որպեսզի Դուք չվնասվեք»: Դուք կարող եք միասին դիտարկել ոստիկանություն դիմելու կամ տնից դուրս գիշերելու կամ հեռանալու տարբերակները:

Ստորև առաջարկվում է հարցերի շարք, որոնց պատասխաններից կախված՝ կարելի է գնահատել ռիսկի մակարդակի մասին:

1. Արդյո՞ք բռնությունն ավելի հաճախակի է դարձել կամ ավելի դաժան ու վատ դրսևորումներ է ստացել վերջին 6 ամսվա ընթացքում:
2. Արդյո՞ք բռնություն կիրառող անձն օգտագործում է թմրանյութ կամ չարաշահում է ալկոհոլային խմիչքներ:
3. Արդյո՞ք նա երբևէ օգտագործել է զենք կամ վախեցրել է, որ զենքով կվնասի Ձեզ:
4. Երբևէ փորձել է Ձեզ խեղդել:
5. Հավատում եք, որ նա կարող է Ձեզ սպանել:
6. Երբևէ ծեծել է Ձեզ, երբ հղի եք եղել:
7. Արդյո՞ք նա մշտապես խանդում է Ձեզ:
8. Արդյո՞ք բռնություն կիրառող անձը հետապնդում, հետևում, վերահսկում է Ձեզ տարբեր միջոցներով (հեռախոսագանգերի վերահսկում ու ձայնագրում, հետապնդում աշխատանքի գնալիս և այլն):

Եթե վերը նշված հարցերի կեսից ավելին ստացել են դրական պատասխան, ապա բռնության ենթարկված անձի համար ռիսկը բարձր է:

Եթե տուժողի համար անվտանգ չէ տուն վերադառնալը, ուղղորդեք վերջինիս ապաստարան կամ փորձեք գտնել այնպիսի ապահով տարածք, որտեղ ինքը կարող է գնալ, իսկ բռնություն կիրառող անձը չգիտի այդ վայրի մասին:

Արդյունավետ անվտանգության պլան մշակելու համար անհրաժեշտ է հասկանալ այն ռիսկային գործոնները, որոնք սրում են բռնությունը և հանգեցնում դրա կրկնությանը:

Անվտանգության պլանի առանձնահատկությունները

Անվտանգության պլանը մանրակրկիտ մշակված անհատական պլան է, որը բռնություն վերապրած անձին օգնում է պաշտպանվել և մնալ անվտանգ թե՛ բռնարար հարաբերությունների առկայության պարագայում, թե՛ հեռանալ պլանավորելիս և թե՛ հեռանալուց հետո:

Անվտանգության պլանի բաղադրիչներ

<i>Ապահով վայր գնալու համար</i>	Եթե պետք է հեռանալ տանից, ո՞ր կարող եք գնալ:
<i>Երեխաների համար պլանավորում</i>	Մենամկ եք հեռանալու, թե՛ երեխաների հետ:
<i>Փոխադրամիջոց</i>	Ինչպե՞ս կարող եք հասնել անվտանգ տարածք:
<i>Իրեր, որ կարող եք վերցնել Ձեզ հետ</i>	Կարիք ունե՞ք վերցնելու փաստաթղթեր, բանալիներ, գումար, հագուստ կամ այլ կարևոր իրեր: Կարո՞ղ եք այդ իրերը մի տեղ դնել տանը՝ անվտանգ վայրում կամ փոխանցել այլ վստահելի մարդու:
<i>Ֆինանսական</i>	Դուք ունե՞ք գումար, եթե ուզում եք հեռանալ: Որտե՞ղ է այն պահվում, հնարավորություն ունե՞ք վերցնել այն:

***Տանն անվտանգ մնալու կարևոր խորհուրդներ,
որոնք կարելի է քննարկել զանգահարողի հետ***

- Խուսափել մնալ այնպիսի տարածքներում, որտեղ սուր գործիքներ կան:
- Մինչ հեռանալն այնպես անել, որ զուգընկերը չիմանա հեռանալու պլանների կամ մտքերի մասին. վիճակագրությունը ցույց է տալիս, որ բռնությունն հավանականությունն այս դեպքերում ավելի է մեծանում:
- Փորձել մտապահել բոլոր այն հեռախոսահամարները, որոնք առաջին անհրաժեշտության պարագայում կարող են պետքական լինել, մասնավորապես՝ ոստիկանության համապատասխան ստորաբաժանման հեռախոսահամար, ընտանեկան բռնության հիմնախնդիրներով զբաղվող կազմակերպությունների թեժ-գիծ հեռախոսահամարներ:
- Կրկնել փախուստի ծրագիրը, որպեսզի հարկ եղած դեպքում ստացվի իրագործել այն:
- Խրախուսել, որ զանգահարողն անվտանգության պլան մշակի նաև երեխաների հետ. միասին գաղտնաբառ որոշեն, որպեսզի հարկ եղած պարագայում երեխաները կարողանան աջակցության դիմել:
- Որոշել գաղտնաբառ, որի մասին կիմանան նաև վստահելի հարևանները, ընկերները, որպեսզի եթե կարիք լինի, օրինակ՝ դիմեն ոստիկանություն:
- Խրախուսել, որ բջջային հեռախոսը միշտ իր մոտ կամ ապահով մի վայրում պահի:

***Հեռանալուց հետո անհրաժեշտ խորհուրդներ
անվտանգության պլանի համար***

- Տեղեկացրեք ձեր երեխայի խնամքով զբաղվող հաստատություններին, թե ով կարող է նրանց վերցնել դպրոցից, մանկապարտեզից:
- Ձեր հարևաններին տեղեկացրեք, որ այլևս չեք ապրում Ձեր զուգընկերոջ հետ, կամ տեղեկացրեք, որ վերջինիս տեսնելու պարագայում զանգահարեն ոստիկանություն կամ տեղեկացնեն Ձեզ:
- Երբեք մի ասեք բռնություն կիրառող անձին՝ որտեղ եք ապրում:

- Մի՛ գանգահարեք տան համարից:
- Աշխատավայրում զգուշացրեք տնօրենին կամ անվտանգության աշխատակիցներին հնարավոր ռիսկերի մասին. ցույց տվեք Ձեր նախկին զուգրնկերոջ լուսանկարն անվտանգության աշխատակիցներին, խնդրեք հարկ եղած դեպքում ուղեկցել Ձեզ աշխատավայր:
- Ամենօրյա գործողություններում փոփոխություններ կատարել, օրինակ՝ տարբեր ժամերի տանից դուրս գալ, նախօրոք պայմանավորվելով աշխատավայրում ղեկավարի հետ՝ խնդրել ինչ-որ մեկին ուղեկցել, չայցելել այն վայրերը, որոնց մասին տեղյակ է եղել բռնություն կիրառող անձը:
- Եթե Ձեր դեպքում կիրառվել է պաշտպանական որևէ միջոց, տեղեկացրեք ոստիկանությանը, որ բռնություն կիրառող անձը կրկին խախտում է Ձեր տարածքը, հետամտում կամ հետապնդում է Ձեզ:
- Միայն անվտանգության պլան ունենալը դեռևս անվտանգության երաշխիք չէ: Բռնության ենթարկված անձը պետք է հասկանա, որ բռնությունը ցիկլային բնույթ ունի և կարող է կրկնվել:

ՀԵՏԱԳԱ ՔԱՅԼԵՐ **Ուղղորդման կազմակերպում**

1. ՀՀ ոստիկանություն

Անհրաժեշտ է ներկայացնել «Ընտանիքում բռնության կանխարգելման, ընտանիքում բռնության ենթարկված անձանց պաշտպանության և ընտանիքում համերաշխության վերականգնման մասին» ՀՀ օրենքով ամրագրված ընտանիքում բռնության ենթարկված անձանց պաշտպանության միջոցների տեսակներից՝ նախազգուշացման և անհետաձգելի միջամտության որոշման կայացման հնարավորության մասին.

Նախազգուշացում

Կիրառվում է այն դեպքերում, երբ ընտանիքում բռնության դեպքը ոստիկանությունը հայտնաբերել է առաջին անգամ, կատարված արարքը հանցակազմի հատկանիշներ առերևույթ չի պարունակում, և անհետաձգելի միջամտության հիմքերն առկա չեն: Նախազգուշացում կիրառելու մասին որոշումը ներառում է բռնության շարունակման կամ կրկնման դեպքում օրենքով նախատեսված պատասխանատվության միջոցների մասին իրազեկում: Նախազգուշացումը կիրառվում է դեպքի մասին տեղեկանալուց հետո հնարավորինս սեղմ ժամկետում:

Անհետաձգելի միջամտության որոշում

Եթե ընտանիքի մեկ անդամը մյուսի նկատմամբ բռնություն է կիրառել, և առկա է հիմնավոր ենթադրություն բռնության կրկնման կամ շարունակման անմիջականորեն սպառնացող վտանգի մասին, ապա ընտանիքի մյուս անդամի կյանքի և առողջության ապահովման նպատակով ոստիկանության իրավասու ծառայողն անհապաղ կայացնում է անհետաձգելի միջամտության որոշում:

Անհետաձգելի միջամտության որոշում կարող է կայացվել նաև այն դեպքում, երբ նախազգուշացում ստանալուց հետո՝ մեկ տարվա ընթացքում, անձը կատարել է այնպիսի բռնի արարք, որը չի պարունակում հանցակազմի հատկանիշներ:

Անհետաձգելի միջամտության որոշմամբ կարող են կիրառվել հետևյալ սահմանափակումները

- 1) հարկադրել ընտանիքում բռնություն գործադրած անձին անհապաղ հեռանալ ընտանիքում բռնության ենթարկվածի բնակության տարածքից և արգելել այդտեղ նրա վերադարձը մինչև որոշմամբ սահմանված ժամկետի լրանալն,
- 2) արգելել ընտանիքում բռնություն գործադրած անձին այցելել իր հետ համատեղ բնակելի տարածքում չբնակվող՝ ընտանիքում բռնության ենթարկվածին, իսկ անհրաժեշտության դեպքում՝ նաև նրա խնամքի տակ եղող անձանց՝ նրանց աշխատանքի, ուսման, հանգստի, բնակվելու կամ այլ վայրեր,
- 3) արգելել ընտանիքում բռնություն գործադրած անձին այնպիսի հեռավորությունից ավելի մոտենալ ընտանիքում բռնության ենթարկվածին (անհրաժեշտության դեպքում՝ նաև նրա խնամքի տակ եղող անձանց), որն ընտանիքում բռնության ենթարկված անձի մեջ ողջամտորեն հիմնավոր վախ կհարուցի իր անձնական անվտանգությանը սպառնացող վտանգի մասին: Այս սահմանափակումը կիրառելիս որոշմամբ սահմանվում է հեռավորության կոնկրետ չափը: (Այս սահմանափակումը չի գործում հաշտեցման գործընթացի շրջանակում ընտանիքում բռնության ենթարկված և ընտանիքում բռնություն գործադրած անձանց միջև աջակցության կենտրոնի թույլտվությամբ կենտրոնի տարածքում կամ կենտրոնի համապատասխան մասնագետի ներկայությամբ կազմակերպվող հանդիպման ժամանակ),
- 4) մինչև որոշմամբ սահմանված ժամկետի լրանալն ի պահ վերցնել բռնություն գործադրած անձի տիրապետման տակ գտնվող զենքը: Այս սահմանափակումը կիրառելիս որոշման մասին իրազեկելու պա-

հին ընտանիքում բռնություն գործադրած անձի տիրապետման տակ զենք լինելու դեպքում նա այն անհապաղ հանձնում է որոշումը կայացրած ոստիկանության ծառայողին,

- 5) արգելել ընտանիքում բռնություն գործադրած անձին հեռախոսային, նամակագրական կամ կապի այլ միջոցներով հաղորդակցվել ընտանիքում բռնության ենթարկվածի, իսկ անհրաժեշտության դեպքում՝ նաև նրա խնամքի տակ եղող անձանց հետ:

ԿԱՐԵՎՈՐ Է ԻՄԱՆԱԼ.

Անհետպահանջ միջամտության որոշման գործողության ժամկետը չի կարող գերազանցել քսան օրը: Եթե անհետպահանջ միջամտության ընթացքում դատարանը քննում է պաշտպանական որոշման դիմում, ապա այն ուժի մեջ է մնում մինչև դատարանի կողմից որոշում կայացվելը:

Սահմանափակումները կարող են կիրառվել առանձին կամ համակցության մեջ՝ նշելով դրանց կատարման համար միևնույն կամ փարբեր ժամկետներ:

Եթե անհետպահանջ միջամտության որոշումը կիրառվում է անչափահաս կամ անգործունակ անձի հետ համատեղ բնակվող միակ օրինական ներկայացուցչի նկատմամբ, ապա երեխաների և անգործունակ անձանց ժամանակավոր խնամքը կազմակերպում է խնամակալության և հոգաբարձության մարմինը՝ որոշման պատճենն ստանալուց հետո՝ հնարավորին չափ սեղմ ժամկետում, բայց ոչ ավելի, քան 24 ժամում՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով՝ առաջնորդվելով նրանց շահերով:

Անհետպահանջ միջամտության որոշումն ընտանիքում բռնություն գործադրած անձի կողմից կատարվելու նկատմամբ հսկողություն է իրականացնում ոստիկանությունը:

Բռնության ենթարկված անձանց անհրաժեշտ է տեղեկացնել

- Նշված սահմանափակումները կիրառելիս անհետաձգելի միջամտության որոշում կայացնող ոստիկանության իրավասու ծառայողը չի հեռանում մինչև ընտանիքում բռնություն գործադրած անձի կողմից իր իրերը հավաքելը և ընտանիքում բռնության ենթարկվածի բնակության վայրը լքելը:
- Ընտանիքում բռնություն գործադրած անձը կարող է որոշումն ուժի մեջ մտնելուց հետո իր անձնական իրերն այդ վայրից վերցնել միայն մեկ անգամ՝ ոստիկանության ծառայողի ուղեկցությամբ:

Բռնության ենթարկված անձին պետք է հիշեցնել նաև, որ նա պարտավոր է ձեռնպահ մնալ այնպիսի գործողություններ կատարելուց, որոնք ուղղված են ընտանիքում բռնություն գործադրած անձի կողմից անհետաձգելի միջամտության որոշմամբ իր վրա դրված պարտականությունների չկատարմանը:

Ընտանիքում բռնության ենթարկված անձի կողմից դիտավորությամբ պարբերաբար նման գործողություններ կատարելու դեպքում անհետաձգելի միջամտության որոշումը կարող է վերացնել այն կայացրած ոստիկանության իրավասու ծառայողը:

Անհետաձգելի միջամտության որոշման պահանջներն ընտանիքում բռնություն գործադրած անձի կողմից չկատարելն առաջացնում է օրենքով նախատեսված պատասխանատվություն:

Անհետաձգելի միջամտության որոշման բողոքարկում

Անհետաձգելի միջամտության որոշումը կարող է բողոքարկվել վերադասության կարգով՝ ընտանիքում բռնություն գործադրած անձին դրամասին իրազեկելուց հետո՝ հնգօրյա ժամկետում, ինչպես նաև դատական կարգով՝ Հայաստանի Հանրապետության վարչական դատավարության օրենսգրքով սահմանված ժամկետներում: Որոշման դեմ բողոք բերելը չի կասեցնում որոշման կատարումը: Վարչական բողոքը քննվում և դրա հիման վրա որոշում է կայացվում այն ստանալուց հետո՝ հնգօրյա ժամկետում:

2. ՀՀ դատարաններ

Պաշտպանական որոշման համար դատարան կարող է դիմել ընտանիքում բռնության ենթարկված կամ ենթադրաբար ենթարկված անձը կամ նրա համաձայնությամբ՝ աջակցության կենտրոնը: Եթե ընտանիքում բռնության ենթարկվածն անչափահաս կամ դատական կարգով անգործունակ կամ սահմանափակ գործունակ ճանաչված անձ է, ապա պաշտ-

պանական որոշման համար դատարան կարող են դիմել նրա մերձավոր ազգականները, օրինական ներկայացուցիչը և խնամակալության ու հոգաբարձության մարմինը:

Պաշտպանական որոշմամբ կարող են կիրառվել անհետաձգելի միջամտության որոշմամբ նախատեսված սահմանափակումները: Բացի դրանից՝ դատարանը կարող է՝

1) ընտանիքում բռնություն գործադրած անձի վրա պարտականություն դնել՝ ընտանիքում բռնության ենթարկվածի հետ կիսելու իրենց համատեղ անչափահաս կամ չափահաս անաշխատունակ երեխաների, ինչպես նաև իրենց համատեղ խնամքի տակ եղող անձանց խնամքի ծախսերը: Դատարանը կարող է ընտանիքում բռնություն գործադրած անձի վրա պարտականություն դնել հոգալու ընտանիքում բռնության ենթարկվածի այլ անհրաժեշտ ծախսերը, որոնք ծագել են գործադրված բռնության պատճառով:

2) արգելել երեխաների հետ տեսակցությունները:

3) ընտանիքում բռնություն գործադրած անձի վրա դնել պարտականություն անցնելու ռեաբիլիտացիոն ծրագիր:

Խորհրդարկության ժամանակ կարևոր է հստակեցնել

- Անհետաձգելի միջամտության որոշման ուժի մեջ լինելը չի բացառում պաշտպանական որոշման համար դիմելու հնարավորությունը:
- Պաշտպանական որոշումը կայացվում է մինչև 6 ամիս ժամկետով և կարող է դրա անհրաժեշտությունը հիմնավորող համապատասխան դիմումի հիման վրա դատարանի պատճառաբանված որոշմամբ 2 անգամ երկարաձգվել՝ յուրաքանչյուր անգամ առավելագույնը մինչև 3 ամիս ժամկետով:
- Սահմանափակումները կարող են կիրառվել առանձին կամ համակցության մեջ՝ նշելով դրանց կատարման համար միևնույն կամ տարբեր ժամկետներ:
- Պաշտպանական որոշման դիմումին ներկայացվող պահանջները, դրանք քննելու կարգը, դատարանի կողմից ընդունվող ակտերը, դրանք բողոքարկելու կարգը և պաշտպանական որոշման դադարման հիմքերը նախատեսվում են ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքով:
- Ընտանիքում բռնության ենթարկվածի դատական ներկայացուցչության համար հանրային պաշտպան տրամադրելու հիմքերը գործում են նաև ընտանեկան բռնության դեպքերում:

Եթե ընտանիքում բռնության ենթարկվածն անչափահաս կամ անգործունակ անձ է, և պաշտպանական որոշումը կիրառվում է նրա հետ համատեղ բնակվող միակ օրինական ներկայացուցչի (կամ ներկայացուցիչներին) նկատմամբ, ապա դատարանը խնամակալության և հոգաբարձության մարմինն հանձնարարում է լուծել երեխայի կամ անգործունակ անձի ժամանակավոր խնամքի հարցը՝ առաջնորդվելով նրանց շահերով:

Պաշտպանական որոշումն ընդհանրում բռնություն գործադրած անձի կողմից կատարվելու նկատմամբ հսկողություն է իրականացնում ոստիկանությունը, իսկ պաշտպանական որոշման պահանջներն ընդհանրում բռնություն գործադրած անձի կողմից չկատարելն առաջացնում է օրենքով նախատեսված պատասխանատվություն:

Խորհրդարկություն տրամադրելիս, մասնավորապես՝ պաշտպանական միջոցների կիրառության նպատակով ՀՀ ոստիկանություն և դատարաններ ուղղորդելիս անհրաժեշտ է հստակեցնել, որ «Ընդհանրում բռնության կանխարգելման, ընդհանրում բռնության ենթարկված անձանց պաշտպանության և ընդհանրում համերաշխության վերականգնման մասին» ՀՀ օրենքով ամրագրված ընդհանրում բռնության ենթարկված անձանց պաշտպանության միջոցները՝ նախագգուշացումը, անհետպաճգելի միջամտության որոշումը, պաշտպանական որոշումը, կանխարգելիչ միջոցներ են՝ ուղղված իրենց իսկ իրավունքների պաշտպանությանը կամ դրանց ազատ իրականացման, այլ ոչ թե ենթադրյալ բռնություն գործադրող անձի նկատմամբ քրեական հետապնդման հարուցում կամ իրականացում և չեն հանդիսանում հարուցման կամ իրականացման հիմք:

Պաշտպանության միջոցների կիրառումը չի խոչընդոտում օրենքով սահմանված կարգով քրեական գործ հարուցելուն և քրեական հետապնդում իրականացնելուն:

Անչափահաս կամ անգործունակ անձի նկատմամբ անհետպաճգելի միջամտության կամ պաշտպանական որոշումներ չեն կայացվում:

3. Աջակցման կենտրոններ, ապաստարաններ, ընտանեկան բռնության կանխարգելման և պաշտպանության հիմնախնդիրներով զբաղվող, կանանց իրավունքների պաշտպանություն իրականացնող այլ հասարակական կազմակերպություններ

Ուղղորդման ընթացքում կարևոր է, որպեսզի մի շարք հարցեր ևս հաշվի առնվեն.

- Վստահ եղեք, որ ուղղորդվող կառույցը համապատասխանում է զանգահարողի կարիքներին և պահանջներին (օրինակ՝ եթե տուժողը (ղիմողը) ապաստարանի կարիք ունի, անհրաժեշտ է նրան ուղղորդել կազմակերպություն, որը տրամադրում է նման ծառայություն):
- Եթե բռնության ենթարկված անձը բարձրաձայնում է խնդիրներ՝ կապված ուղղորդման հետ, կարևոր է մանրամասն քննարկել դրանք (օրինակ՝ տուժողը (ղիմողը) կարող է տեղափոխման հետ կապված բարդություններ ունենալ կամ չիմանալ՝ որտեղ թողնել երեխաներին գրասենյակ այցելելու համար):
- Ուղղորդվող կազմակերպության հետ կարևոր է ունենալ նախնական պայմանավորվածություններ, որոնք կնպաստեն նպատակային ուղղորդմանը:
- Ուղղորդումը կարող է իրականացվել թե՛ ներքին, թե՛ արտաքին ռեսուրսների սահմաններում:

ԿԱՐԵՎՈՐ Է ԻՄԱՆԱԼ.

- Ուղղորդելիս *տուժողին (ղիմողին) պատմեք ծառայության մասին (տրամադրել հասցեն, ինչպես հասնել այնտեղ, ում հետ, ամենայն հավանականությամբ, կարող է հանդիպել)*
- *Անհրաժեշտության դեպքում գրեք անհրաժեշտ տեղեկավորությունը, օրինակ, կազմակերպության անունը, հեռախոսահամարը, վայրը և ընդգծել դրա անվտանգության մասին:*
- *Եթե տուժողը (ղիմողը) չունի անվտանգ վայր չունի զանգահարելու համար կամ հեռախոս չունի, կարող եք Դուք զանգահարել կազմակերպություն և նախնական պայմանավորվածություն ձեռք բերել:*
- *Անհրաժեշտության դեպքում, եթե տուժողը (ղիմողը) ցանկանում է, կարող եք կազմակերպել, որ նա պայմանավորված առաջին հանդիպմանը ներկայանա վստահելի անձի հետ:*

ՕԳՏԱԿԱՐ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ՀՂՈՒՄՆԵՐ

ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմ

ՀՀ, 0002, Երեւան, Պուշկին 56ա

+374 10 53 76 51

+374 96116100

Էլ.փոստ՝ ombuds@ombuds.am

ՄԱՐԶԱՅԻՆ ԱՏՈՐԱԲԱԺԱՆՈՒՄՆԵՐ

Շիրակի մարզ, ք. Գյումրի

Միեր Մկրտչյան 44/46

+374312 41981

Էլ.փոստ՝ shirak@ombuds.am

Գեղարքունիքի մարզ, ք. Գավառ

Կենտրոնական հրապարակ 4

+37426430116

Էլ.փոստ՝ gavar@ombuds.am

Սյունիքի մարզ, ք. Կապան

Մելիք Ստեփանյան 6

+37428520116

Էլ.փոստ՝ kapan@ombuds.am

ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն

Թեժ գիծ ծառայություն՝ 114

Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության աշխատակազմի ընտանիքի, կանանց և երեխաների հիմնահարցերի վարչություն

Վարչության պետ՝ Գեղանուշ Գյունաշյան
հեռ.՝ (010) 54-27-35

Էլ.փոստ՝ geghanush.ghyunashyan@mlsa.am

Կանանց հիմնահարցերի բաժին

Վարչության պետի տեղակալ, բաժնի պետ՝

Արմենուհի Թանաշյան

հեռ.՝ (010) 56-53-21

Էլ.փոստ՝ armine.tanashyan@mlsa.am

Երեխաների հիմնահարցերի բաժին
Բաժնի պետ՝ Լենա Հայրապետյան
հեռ.՝ (010) 56-53-21
էլ.փոստ՝ lena.hayrapetyan@mlsa.am

ՀՀ ոստիկանության քրեական հետախուզության գլխավոր վարչության անչափահասների իրավունքների պաշտպանության և ընտանեկան բռնության դեմ պայքարի վարչություն
Թեժ գիծ ծառայություն՝
(+374) 10 54-69-14
(+374) 10 54-69-12

ՀՀ առողջապահության նախարարություն
Թեժ գիծ ծառայություն՝ 8003

**Հանրային պաշտպանի գրասենյակ
(ՀՀ փաստաբանների պալատ)**
Հայաստան, 0010, Երևան
Զաքյան փող., 2 շենք, 2-րդ հարկ
(Կենտրոն վարչ. շրջան)
+37410600714

Հասարակական կազմակերպություններ, որոնք տրամադրում են սոցիալ-հոգեբանական, իրավաբանական ծառայություններ, անհրաժեշտության դեպքում ուղորդում բժշկական հաստատություններ

Սեռական բռնության դեպքերում օգտակար հեռախոսահամարներ՝ 0800 01 280, 077 99 12 80
Ընտանեկան բռնության դեպքերում օգտակար հեռախոսահամարներ՝ 099 88 78 08, 010 54 28 28

Օգտակար հղումներ՝

Սեռական բռնության ճգնաժամային կենտրոն ՀԿ <http://www.saccarmenia.org/>

Կանանց ռեսուրսային կենտրոն ՀԿ՝ <http://www.womenofarmenia.org/>

Կանանց աջակցման կենտրոն ՀԿ՝ <http://www.womensupportcenter.org/>

Կանանց իրավունքների կենտրոն ՀԿ՝ <http://www.wrcorg.am/>

Հասարակություն առանց բռնության ՀԿ՝ <http://www.swv.am/>

«Ընդդեմ կանանց նկատմամբ բռնության» կոալիցիա՝ <https://coalitionagainstviolence.org/>



ԵՎՐՈՊԱԿԱՆ ՄԻՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՏՈՐ
EUROPEAN UNION FOR ARMENIA

Այս հրապարակումը պատրաստվել է Եվրոպական միության ֆինանսական աջակցությամբ: Բովանդակության համար պատասխանատվություն է կրում ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմը, և պարտադիր չէ, որ այն արտահայտի Եվրոպական միության տեսակետները:

Սույն հրատարակության մեջ արտահայտված տեսակետները պատկանում են հեղինակներին և պարտադիր չէ, որ համընկնեն ՄԱԿ-ի Զարգացման ծրագրի, ՄԱԿ-ի Բնակչության հիմնադրամի և ՅՈՒՆԻՍԵֆ-ի տեսակետների հետ:

Իրականացնող
գործընկերներ



Empowered lives.
Resilient nations.

